ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա:

Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գրտող զիս արա:

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոցն:

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա:

Զարթիր, Տէր, յօգնել,
Զարթո ըզթմրեալս,
Զուարթնոց նըմանիլ:

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա:

Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ

Գրտող զիս արա:

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոցն:

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա:

Ձարթիր, Տէր, յօգնել,
Ձարթո ըզթմրեալս,
Ձուարթնոց նըմանիլ:

Էդ Հայր անսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի:

Ընկալ զիս, գրթած,
Ընկալ, ողորմած,
Ընկալ, մարդասէր:

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ զյանցանս:

Ժողովող բարեաց,
Ժողովեա և զիս
Ժողովս անդրանկաց:

Ի քէն, Տէր, հայցեմ,
Ի մարդասիրէդ,
Ինձ բժշկութիւն:

Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա

Խորհուրդ լուսաւոր:

Ծնունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա զլոյս փառաց:

Կենարար փրկիչ,
Կեցո զմեռեալս,
Կանգնեա զգլորեալս:

Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով:

Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց շնորհեա:

Ղամպարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո:

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել ի յերկինս:

Միածինդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա զիս, Քրիստոս:

Նորոգող հնութեանց,
Նորոգեա և զիս,
Նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,

Շնորհեա զթողութիւն:

Ուրախացո, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ:

Չար մշակողին,
Չար սերմանց նորին
Չորացո զպըտուղն:

Պարգևիչ բարեաց,
Պարգևեա իմոց
Պարտեացս թողութիւն:

Զուր շնորհեա աչացս,
Զերմ հեղուլ զարտօսր,
Զնջել զյանցանս:

Ռետինդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա,
Սիրտ իմ քարեղէն:

Վասըն գըթութեանդ
Վասն ողորմութեանդ,
Վերստին կեցո:

Տենչալւոյդ տեսլեամբ
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:

Ռաբունդ երկնաւոր,
Ռոտեա զաշակերտս
Ռամից երկնայնոց:

Ցօղ արեան քո, Տէր,
Ցօղեա ի հոգիս,

Ցընծասցէ անձն իմ։

Իիւծեալըս մեղօք,
Իիւծեալ աղաչեմ,
Իիւսել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց։

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս,
Քեզ երգել զփառս։

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ.
Ցիշեա, Տէր և ողորմեա։

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՅՍՈՅ

Առաւо́տ լույսի,
Արեգա́կ արդար,
Ինձ լո́ւյս ծագեցրու։

Բխո́ւմն Հօրից,
Բխի́ր հոգուս մեջ,
Խոսք Քեզ հաճելի։

Գանձդ ողորմութեան,
Ծածկված գանձդ,
Գտնող ինձ արա։

Ողորմութեան դուռը
Դավանողիս բա́ց,
Դասի́ր երկնայինների հետ։

Երրեակ Միութիւն,
Եղածների խնամող
Եվ ինձ ողորմիր։

Ձարթնիր, Տէ՛ր՝ օգնելու,
Արթնացրո́ւ թմրածիս,
Որ հրեշտակներին նմանվեմ։

Է հայրդ անսկիզբ,
Էակից Որդի,
Եվ միշտ Սուրբ Հոգի։

Ընդունի́ր ինձ գթա́ծ,
Ընդունի́ր ողորմա́ծ,
Ընդունի́ր մարդասէ՛ր։

Թագաւո́ր փառքի,
Թողութիւններ տվող,
Թողութիւն տուր հանցանքներիս։

Ժողովո́ղ բարիքների,

Ժողովիր և ի՛նձ,
ժողովի մեջ անդրանիկների։

Հայցում եմ Տէր
Քեզանից՝ մարդասերիցդ,
Ինձ բժշկութիւն։

Կեանք եղիր մեռածիս,
Լոյս՝ խավարեալիս,
Փարատիչ՝ ցավիս։

Խորհուրդնե՛րն իմացող,
Խաւարիս շնորհի՛ր,
Խորհուրդ լուսաւոր։

Ծնունդ Հոր ծոցի,
Ստուերով ծածկվածիս,
Ծագեցրո՛ւ լույսը փառքի։

Կենարա՛ր Փրկիչ,
Փրկի՛ր մեռյալիս,
Կանգնեցրո՛ւ գլորվածիս։

Ամրացրո՛ւ հաւատով,
Հաստատի՛ր հույսով,
Հիմնի՛ր սիրով։

Բարձրաձայն աղաչում եմ,
Բազկատարած պաղատում՝
Բարեաց պարգևնե՛ր շնորհիր։

Լույսի կանթեղովդ,
Ղեկավա՛ր ճարտար,
Ջորացրո՛ւ թաքնվածիս։

Ճառագա՛յթ փառքի,
Երկինք գնալու
Ճանապա՛րհ ցույց տուր ինձ։

Միածի՛նդ Հօր,

Հարսանեացդ մաքուր
Առագաստը մտցրու ինձ:

Հիշի՛ր ինձ, Քրիստո՛ս,
Երբ ահեղ
Օրը գաս փառքով:

Նորոգո՛ղ հնությունների,
Նորոգիր և ի՛նձ,
Նորոգությա՛մբ զարդարիր:

Շնորհատո՛ւ բարիքների,
Շնորհի՛ր քավություն,
Շնորհի՛ր թողություն:

Ուրախացրո՛ւ, Տէր,
Ոգւոյս փրկությամբ,
Որի համար սգի մեջ եմ:

Չար մշակողի,
Նրա չար սերմերի
Պտուղները չորացրո՛ւ:

Պարգևի՛չ բարիքների,
Ների՛ր իմ պարտքերը:

Զո՛ւր շնորհիր աչքերիս՝
Զերմ արտասուք թափելու,
Զնջելու հանցանքներս:

Սպեղանի՛ օշարակդ,
Խմեցրո՛ւ ռամկական հոգիս,
Լույսի ճամփա՛ն ցույց տուր ինձ:

Սե՛ր անուն Յիսուս,
Սիրով Քո ճմլի՛ր,
Սիրտն իմ քարեղեն:

Գթության համար,
Ողորմության համար

Վերստի՛ն ինձ ապրեցրու:

Տե՛ր Յիսուս Քրիստոս,
Տենչալուդ տեսքով, Հագեցրո՛ւ ինձ:

Վարդապե՛տ երկնավոր,
Աշակերտներիս ժողովի՛ր,
Երկնայինների դասի մեջ:

Քո արյան ցողը,
Տե՛ր, ցողի՛ր հոգուս մեջ,
Որ անձն իմ ցնծա:

Մեղքերից հյուծվածս,
Հյուծվելով աղաչում եմ,
Բարիք հիւսել ինձ:

Փրկի՛չ բոլորի,
Փութա՛ փրկել ինձ, Մեղքերի փորձություններից:

Քավիչ հանցանքների,
Քավիր օրհնաբանողիս՝
Քեզ փառաբանություններ երգելու:

Աստուածածնին բարեխոսությամբ,
Հիշի՛ր, Տէ՛ր, և ողորմի՛ր:

Փառք Հօրը
Եվ Որդուն
Եվ Սուրբ Հոգուն
Այժմ և միշտ հավիտյանս հավիտենից,
Ամեն: